ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Քրեական իրավունքի ամբիոն

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1904/B01«Քրեական իրավունք –1»

Որակավորման
աստիճան՝ բակալավրի կրթական ծրագիր

Կազմեց՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ա. Գաբուզյանը

ԵՊՀ հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2013

## ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1904/B01«Քրեական իրավունք –1» (7 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (48 դասախոսություն, 24 սեմինար, 24 գործնական, 114 ինքնուրույն աշխատանք)

3-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

**Դասընթացի նպատակը**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներին, քրեական օրենքի, հանցագործության, հանցակազմի տարրերի և հատկանիշների էությանն ու բովանդակությանը:

**Կրթական վերջնարդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կունենա

գիտելիք և իմացություն

. քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներից,

. քրեական օրենքի տարածության մեջ և ժամանակի ընթացքում գործողության մեխանիզմներից,

. հանցագործության հատկանիշներից,

. հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերից ու հատկանիշներից:

Ունակ կլինի

(բուն մասնագիտական կարողություններ)

. քննարկումներ և բանավեճեր անցկացնելու առաջադրվող խնդիրների շուրջ,

. վեր հանելու քրեական օրենսդրության մեջ առկա և իրավակիրառ պրակտիկայում ծագող խնդիրները ու տալու դրանց լուծումները,

. վերլուծելու իրավակիրառ պրակտիկայից բերված գործերի կապակցությամբ դատարանների և մյուս իրավապահ մարմինների կողմից ընդունված ակտերը:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված է 2 ընթացիկ գրավոր ստուգում, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ստուգման ընթացքում յուրաքանչյուր ուսանողի տրվում է 3 խնդիր, որոնք իրավակիրառ պրակտիկայից վերցված գործեր են: Յուրաքանչյուր խնդրի արժեքը 3 միավոր է: Միավորների քայլը 0,5 է: Խնդիրների լուծման մեթոդիկան և եղանակները նկարագրված են «Խնդրագիրք ՀՀ քրեական իրավունք դասընթացի (Ընդհանուր մաս)» ուսումնամեթոդական ձեռնարկում (Երևան,

2012թ.): Խնդրի լուծումը ենթադրում է պատասխան և դրա հիմնավորում՝ քրեական օրենսդրության, քրեական իրավունքի տեսության և գործի փաստական հանգամանքների վերլուծության հիման վրա: Առավելագույն միավորին կարող է հավակնել խնդրի հարցերին ճիշտ պատասխան տված և դրանք հստակ, անհրաժեշտ ու բավարար նյութի շարադրմամբ հիմնավորած ուսանողը: Առանց հիմնավորման թեկուզ ճիշտ պատասխանը գնահատվում է 0 միավոր: Խնդրի հարցին (հարցերին) տված սխալ պատասխանի դեպքում ուսանողը կարող է հավակնել միավոր ստանալու, եթե փորձել է հիմնավորել այն: Այդ դեպքում միավորի արժեքը կախված է հիմնավորման խորությունից, հիմնավորման մեջ քրեական օրենսդրության և քրեական իրավունքի տեսության իմացությունը արտացոլելու աստիճանից (նշված դեպքերում ուսանողը կարող է առավելագույնը հավակնել 1 միավորի):

1-ին ընթացիկ ստուգումը ներառում է թեմաներ 1-6-ը, 2-րդ ընթացիկ ստուգումը՝ թեմաներ 7-10-ը:

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## Մաս 1.

### Թեմա 1.

### Քրեական իրավունքի հասկացությունը, խնդիրները, համակարգը: Քրեական իրավունքի գիտությունը

(2 ժամ դասախոսություն)

1. Քրեական իրավունքի հասկացությունը: 2. Քրեաիրավական հարաբերություններ. լայն իմաստով քրեաիրավական հարաբերություններ և նեղ իմաստով քրեաիրավական հարաբերություններ, դրանց ծագման և ավարտի պահերը, կողմերը, բովանդակությունը: 3. Քրեական իրավունքի խնդիրները, քրեական իրավունքի պահպանական և կանխարգելիչ գործառույթները: 4. Քրեական իրավունքի համակարգը. Ընդհանուր և Հատուկ մասեր: 5. Քրեական իրավունքի գիտությունը, դրա կապը հարակից գիտությունների հետ:

**Հարցեր 1-5** – Անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը խնդրահարույց հարցերի վրա բևեռելով:

#### Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Երևան, 2012:

**Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**


1. Лопашенко Н. А. Введение в уголовное право. Учебное пособие. М., 2009.
2. Ковалев О.Г. Уголовное право. Общая часть, М., 2007.
3. Разгильдяев Б.Т. Задачи уголовного права Российской Федерации и их реализация. Саратов, 1993.
4. Уголовное право. Общая часть. Лекция 1. Игнатов А.Н. Введение в изучение уголовного права. Уголовный закон. М., 1996.


## Թեմա 2.

## Քրեական իրավունքի սկզբունքները

(2ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Քրեական իրավունքի սկզբունքների հասկացությունը: 2. Օրինականության սկզբունքը քրեական իրավունքում, անալոգիայի արգելումը: 3. Օրենքի առջև հավասարության սկզբունքը, դրա առանձնահատկությունները քրեական իրավունքում: 4. Քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, դրա նշանակությունը: 5. Անձնական պատասխանատվության սկզբունքը: 6. Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: 7. Արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը. քրեական օրենքի արդարացիությունը, նշանակվող պատժի արդարացիությունը, նույն հանցագործության համար երկրորդ անգամ դատապարտելու արգելքը: 8. Մարդասիրության սկզբունքը. մարդասիրություն հասարակության անդամների նկատմամբ, մարդասիրություն հանցանք կատարած անձանց նկատմամբ:

**Հարցեր 1-8** - Անցկացվում է դասախոսություն՝ քննարկման եղանակով:

**Հարցեր 2, 3 և 7** – Գործնական պարապմունք – ուսանողները նախապես ծանոթանում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին (Տ. Շմավոնյանի վերաբերյալ 2007թ. հուլիսի 13-ի որոշում, գործ ՎԲ-107/07), անալոգիայի արգելքի վերաբերյալ Եվրոպական դատարանի և Հանձնաժողովի նախադեպային որոշումներին (Հայց թիվ 8490/70. Հանձնաժողովի որոշում՝ 12.03.81 թ., Հայց թիվ 8710/79: Հանձնաժողովի որոշում՝ 07.05.82 թ.), օրենքի առջև հավասարության վեաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին (Վոլֆմայերն ընդդեմ Ավստրիայի գործը, Դատարանի 23.09. 1981թ. վճիռը), արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքին վերաբերող ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները (Հ. Հայրապետյանի վերաբերյալ 2007թ. մարտի 30-ի որոշում, գործ ՎԲ-50/07, Ռ. Խատոյանի վերաբերյալ 2007թ. մայիսի 4-ի որոշում, գործ 55/07, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1,

Եր., 2009, էջ 156-167), միևնույն հանցագործության համար կրկնակի դատապարտման արգելքի սկզբունքի վերաբերյալ Եվրոպական դատարանի և Հանձնաժողովի նախադեպային որոշումները (Օլիվեյրան ընդդեմ Շվեյցարիայի գործը, Դատարանի 1998թ. հուլիսի 30-ի վճիռը, գանգատ թիվ 25711/94, Գրադինգերն ընդդեմ Ավստրիայի գործը, Դատարանի 1995թ. հոկտեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 15963/90) և քննարկում դրանք:

**Հարցեր 4, 6 և 8** – Սեմինար պարապմունք – խնդիրների լուծում, խնդրահարույց հարցերի քննարկում:

### Թեմային վերաբերող պարտադիր գրականություն


1. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին (վերջին փոփոխություններով և լրացումներով)):
2. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Երևան, 2012:
3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1, Երևան, 2009, Հատոր 2, 2010թ. Հատոր 3, 2012թ.
4. Խնդրագիրք Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք դասընթացի (Ընդհանուր մաս), Երևան, 2012թ.:


### Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն


1. Лопашенко В.А. Введение в уголовное право. М., 2009.
2. Мальцев В.В. Принципы уголовного права. СПб, 2004.
3. Филимонов В.Д. Принципы уголовного права. М., 2002.


## Թեմա 3.
## Քրեական օրենք

(8 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար, 6 ժամ գործնական )

1. Քրեական օրենքի հասկացությունը, հատկանիշները: 2. Քրեական իրավունքի աղբյուրները. ՀՀ Սահմանադրությունը, վավերացված միջազգային պայմանագրերը, իրավունքի այլ ճյուղերի նորմերը որպես քրեական իրավունքի աղբյուր, դրանք քրեական իրավունքի ձևական աղբյուր համարելու խնդիրը, դատական նախադեպը որպես քրեական իրավունքի աղբյուր, քրեական օրենքը որպես քրեական իրավունքի ձևական աղբ-

յուր: 3. Քրեական օրենքի կառուցվածքը: 4. Քրեաիրավական նորմի կառուցվածքը, Հատուկ մասի նորմերի կառուցվածքը, դիսպոզիցիայի և սանկցիայի տեսակները: 5. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում. քրեական օրենքը ուժի մեջ մտնելու, քրեական օրենքի գործողությունը դադարելու կարգը, հանցանքը կատարելու ժամանակի որոշումը հանցագործությունների տարբեր տեսակների կապակցությամբ: 6. Քրեական օրենքի հետադարձ ուժը: 7. Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ. հիմնական սկզբունքները: 8. Տարածության մեջ քրեական օրենքի գործողության տարածքային սկզբունքը. էությունը, պետության տարածքի հասկացությունը, պետության տարածքին հավասարեցված օբյեկտներ, բացառություն տարածքային սկզբունքից, հանցանքը կատարելու վայրի որոշումը հանցագործությունների տարբեր տեսակների կապակցությամբ: 9. Տարածության մեջ քրեական օրենքի գործողության քաղաքացիության սկզբունքը. էությունը, կրկնակի հետապնդման սկզբունքը, դրանից բացառությունը: 10. Տարածության մեջ քրեական օրենքի գործողության ունիվերսալ և ռեալ սկզբունքները: 11. Հանցանք կատարած անձանց հանձնելը: 12. Քրեական օրենքի մեկնաբանությունը:

**Հարցեր 1-4 և 10-11** – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով: Այնուհետև անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկման և վարժությունների ձևով:

**Հարցեր 5-9** – Անցկացվում է դասախոսություն:

**Հարց 5-11** - Գործնական պարապմունք – Ուսանողները նախապես ծանոթանում են քրեական օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. հուլիսի 13-ի ՎԲ-136/07 նախադեպային որոշմանը Հ. Չալաբյանի գործով (ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1, Եր., 2009, էջ 415-416), քրեական օրենքի հետադարձ ուժի հետ կապված Եվրոպական դատարանի և Հանձնաժողովի նախադեպային որոշումներին (S.W.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, Դատարանի 1995թ. նոյեմբերի 22-ի վճիռը, Սկոպոլան ընդդեմ Իտալիայի գործը, Դատարանի 17.09.2009թ. վճիռը, գանգատ թիվ 10249/03, Սթրեթեթցը, Կեսլերը և Կրենցը ընդդեմ Գերմանիայի գործը, Դատարանի 22.03.2001թ. վճիռը, գանգատներ թիվ 34044/96, 35532/29, 44801/92) և քննարկում դրանք:

**Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**


1. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին (վերջին փոփոխություններով և լրացումներով)):
2. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Երևան, 2012:
3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1, Երևան, 2009, Հատոր 2, 2010թ. Հատոր 3, 2012թ.:
4. Խնդրագիրք Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք դասընթացի (Ընդհանուր մաս), Երևան, 2012թ.:


**Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**


1. Беляев В.Г. Применение уголовного закона: учебное пособие. Волгоград, 1998.
2. Блум М.И. Действие уголовного закона в пространстве. Рига, 1974.
3. Бойков А.И., Волженкин Б.В. Уголовный закон: действие во времени и пространстве. Санкт-Петербург, 1993.
4. Медведев А.М. Пределы действия УК РФ. М., 1998.
5. Наумов В.А. Толкование норм права. М., 1998.
6. Попов А.Н. Уголовный закон и его обратная сила. СПб, 1998.
7. Щепельков В.Ф. Уголовный закон: понятие, структура, пределы действия и толкование. СПб, 2002.
8. Якубов А.Е. Обратная сила уголовного закона. М., 2003


## Թեմա 4.
## Հանցագործություն

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Հանցագործության հասկացությունը: 2. Հանրային վտանգավորությունը որպես հանցագործության նյութական հատկանիշ. հասկացությունը, որակական և քանակական արտահայտությունները, հանրային վտանգավորության աստիճանը որպես հանցագործությունը այլ իրավախախտումներից սահմանազատելու չափանիշ, արարքի նվազ կարևորությունը որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք (ՀՀ քր. օր.-

ի հոդված 18-ի 2-րդ մաս): 3. Հակաիրավականությունը որպես հանցագործության հատկանիշ, անալոգիայի արգելումը: 4. Մեղավորությունը որպես հանցագործության հատկանիշ: 5. Պատժելիությունը և հակաբարոյականությունը որպես հանցագործության հատկանիշներ, դրա վերաբերյալ եղած տեսակետները: 6. Հանցագործությունների դասակարգումը ըստ բնույթի և վտանգավորության աստիճանի, հանցագործությունների դասակարգման քրեաիրավական նշանակությունը:

**Հարցեր 1-6** – Անցակցավում է դասախոսություն, այնուհետև հանձնարարվում է ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են հաջորդ դասախոսությանը:

**Հարցեր 2 և 6** - Անցակացվում է սեմինար պարապմունք (խնդիրների լուծում):

### Թեմային վերաբերող պարտադիր գրականություն


1. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին (վերջին փոփոխություններով և լրացումներով)):
2. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Երևան, 2012:
3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1, Երևան, 2009, Հատոր 2, 2010թ. Հատոր 3, 2012թ.:
4. Խնդրագիրք Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք դասընթացի (Ընդհանուր մաս), Երևան, 2012թ.:


### Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն


1. Базаров Р.А. Преступление. Состав преступления. Челябинск, 1997.
2. Гонтарь И.Я. Преступление и состав преступления как явления и понятия в уголовном праве. Вопросы теории и правотворчества. Владивосток, 1997.
3. Ковалев М.И. Преступление и ответственность. Свердловск, 1987.
4. Марцев А.И. Преступление: сущность и содержание. Омск, 1986.
5. Печников Н.П. Категории преступлений и их уголовно-правовое значение: курс лекций. Тамбов, 2007.
6. Прохоров В.С. Преступление и ответственность. Л., 1984.

## Թեմա 5.
## Հանցակազմ

(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)

1. Հանցակազմի հասկացությունը, հանցակազմ և հանցագործություն հարաբերակցությունը: 2. Հանցակազմի և քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայի հարաբերակցությունը: 3. Ընդհանուր հանցակազմ և կոնկրետ հանցակազմ: 4. Հանցակազմի քրեաիրավական նշանակությունը: 5. Հանցակազմի տարրերն ու հատկանիշները, պարտադիր և ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) հատկանիշներ: 6. Հանցակազմի տեսակները ըստ վտանգավորության աստիճանի, կառուցվածքի և նկարագրման եղանակի:

**Հարցեր 1-6** – Անցկացվում է դասախոսություն:

**Հարցեր 1-4** – Անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում քննարկվում են խնդրահարույց հարցերը

**Հարց 6** – Անցկացվում է գործնական պարապմունք՝ թեմային վերաբերող վարժությունների միջոցով:

### Թեմային վերաբերող պարտադիր գրականություն


1. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին (վերջին փոփոխություններով և լրացումներով)):
2. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Երևան, 2012թ.:
3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1, Երևան, 2009, Հատոր 2, 2010թ. Հատոր 3, 2012թ.:
4. Խնդրագիրք Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք դասընթացի (Ընդհանուր մաս), Երևան, 2012թ.:


### Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն


1. Базаров Р.А. Преступление. Состав преступления. Челябинск, 1997.
2. Гонтарь И.Я. Преступление и состав преступления как явления и понятия в уголовном праве. Вопросы теории и правотворчества. Владивосток, 1997.
3. Игнатов А.Н., Костарева Т.А. Уголовная ответственность и состав преступления. М., 1996.

4. Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. М., 1972.
5. Куринов Б.А. Научные основы квалификации преступлений. М., 1984.
6. Метельский П.С. Состав преступления. Новосибирск, 2000.

**Թեմա 6.**

**Հանցագործության օբյեկտ**

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Հանցագործության օբյեկտի հասկացությունը, հասարակական հարաբերությունները որպես հանցագործության օբյեկտ: 2. Հանցագործության օբյեկտը և առարկան. հանցագործության առարկայի հասկացությունը, առարկայի և օբյեկտի հարաբերակցությունը: 3. Հանցագործության օբյեկտի տեսակները, անմիջական օբյեկտը և հանցագործությունների որակումը: 4. Հանցագործության առարկան, գործիքներն ու միջոցները, հանցագործության առարկայի քրեաիրավական նշանակությունը:

**Հարցեր 1-3** – Անցկացվում է դասախոսություն:

**Հարց 4** – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը:

**Հարցեր 1-4** – Սեմինար պարապմունք. խնդիրների լուծում, խնդրահարույց հարցերի քննարկում:

**Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**

1. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին (վերջին փոփոխություններով և լրացումներով)):
2. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Երևան, 2012թ.:
3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1, Երևան, 2009, Հատոր 2, 2010թ. Հատոր 3, 2012թ.:
4. Խնդրագիրք Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք դասընթացի (Ընդհանուր մաս), Երևան, 2012թ.:

### Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Винокуров В.Н. Объект преступления: теория, законодательство, практика., М., 2011.
2. Винокуров В.Н. Объект преступления: история развития и проблемы понимания., Красноярск, 2009.
3. Коржанский Н.И. Объект и предмет уголовно-правовой охраны. М., 1980.
4. Новоселев Г.П. Учение об объекте преступления. Методологические аспекты. М., 2001.
5. Таций В.Я. Объект и предмет преступления в советском уголовном праве. Харьков, 1988.

## Մաս 2.

### Թեմա 7.

### Հանցագործության օբյեկտիվ կողմը

(8 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար, 6 ժամ գործնական)

1. Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը, քրեաիրավական նշանակությունը: 2. Հանրորեն վտանգավոր արարքը որպես հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ. հասկացությունը, սոցիալական և հոգեֆիզիոլոգիական հատկանիշները: 3. Հանրորեն վտանգավոր գործողություն. հասկացությունը, տեսակները: 4. Հանրորեն վտանգավոր անգործություն. հասկացությունը, տեսակները: 5. Հանրորեն վտանգավոր հետևանքներ. հասկացությունը, տեսակները: 6. Պատճառական կապը որպես հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ. քրեաիրավական նշանակությունը, պատճառական կապի վերաբերյալ եղած տեսակետները: 7. Հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը, իրադրությունը, գործիքներն ու միջոցները:

**Հարցեր 1-6** – Անցակացվում է դասախոսություն:

**Հարց 7** – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը:

**Հարցեր 2-7** – Անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում քննարկվում են խնդրահարույց հարցերը:

**Հարցեր 2-6** – Գործնական պարապմունք. խնդիրների լուծում (ուսանողները բաժանվում են երկու խմբի՝ դատական պրակտիկայից վերցված օրինակների շուրջ քննարկում ծավալելու նպատակով) :

## Թեմային վերաբերող պարտադիր գրականություն


1. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին (վերջին փոփոխություններով և լրացումներով)):
2. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Երևան, 2012թ.:
3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1, Երևան, 2009, Հատոր 2, 2010թ. Հատոր 3, 2012թ.:
4. Խնդրագիրք Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք դասընթացի (Ընդհանուր մաս), Երևան, 2012թ.:


## Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն


1. Ковалев М.И. Объективная сторона преступления. Красноярск, 1993.
2. Ковалев М.И. Проблемы учения об объективной стороне состава преступления. Красноярск, 1991.
3. Коробеев А.И. Уголовная наказуемость общественно опасных деяний. Хабаровск, 1986.
4. Малинин В.Б. Причинная связь в уголовном праве. СПб, 2000.
5. Мальцев В.В. Проблемы уголовно-правовой оценки общественно опасных последствий. Саратов, 1989.
6. Сахаров В.И. Средства и орудия совершения преступлений и их уголовно-правовое значение. М., 1996.
7. Тер-Акопов А.А. Бездействие как форма преступного поведения. М., 1980.
8. Тер-Акопов А.А. Преступление и проблемы нефизической причинности в уголовном праве. М., 2003.

**Թեմա 8.**

**Հանցագործության սուբյեկտ**

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)

1. Հանցագործության սուբյեկտի հասկացությունը, հատկանիշները: 2. Տարիքը որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ. քրեական պատասխանատվության ենթարկելու ընդհանուր տարիքը, հանցագործություններ որոնց համար քրեական պատասխանատվություն է նախատեսված 14 տարեկանից, տարիքը որոշելու կարգը: 3. Մեղսունակություն. հասկացությունը, հատկանիշները: 4. Անմեղսունակություն. հասկացությունը, բժշկական և իրավաբանական հատկանիշները, իրավաբանական հատկանիշի գիտակցական և կամային չափանիշները, անմեղսունակության քրեաիրավական նշանակությունը: 5. Սահմանափակ մեղսունակություն. հասկացությունը, հատկանիշները, քրեաիրավական նշանակությունը: 6. Հանցագործության հատուկ սուբյեկտ. հասկացությունը, հատկանիշները, հատուկ սուբյեկտի հատկանիշ չունեցող անձանց մասնակցությունը հատուկ սուբյեկտով հանցագործությանը, նրանց քրեական պատասխանատվության առանձնահատկությունները: 7. Քրեական պատասխանատվությունը հարբածության վիճակում հանցանք կատարելու համար:

**Հարցեր 1-7** – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են հետագա դասախոսությունների ընթացքում:

**Հարցեր 2-5 և 7** – Անցկացվում է սեմինար պարապմունք. ուսանողները քննարկում են հարցերի օրենսդրական կարգավորման վիճակը և փորձում են առաջարկություններ ներկայացնել ուղղված օրենսդրության կատարելագործմանը:

**Հարցեր 2-7** – Անցկացվում է գործնական պարապմունք՝ խնդիրների լուծմամբ (ուսանողները բաժանվում են երկու խմբի՝ դատական պրակտիկայից վերցված օրինակների շուրջ քննարկում ծավալելու նպատակով):

**Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**


1. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին (վերջին փոփոխություններով և լրացումներով)):
2. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Երևան, 2012թ.:
3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1, Երևան, 2009, Հատոր 2, 2010թ. Հատոր 3, 2012թ.:

4. Խնդրագիրք Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք դասընթացի (Ընդհանուր մաս), Երևան, 2012թ.:

**Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**

1. Дьякин А.Л., Бытко Ю.И. Уголовная ответственность юридических лиц., Саратов, 2009
2. Аветисян С.С. Специальный субъект преступления и уголовная ответственность. Ереван, 2003.
3. Лазарев А. И. Субъект преступления. М., 1981.
4. Казаченко И.Я., Сухарев Е.А., Гусев Е.А. Проблема уменьшенной вменяемости. Екатеринбург, 1993.
5. Назаренко Г.В. Невменяемость: уголовно-релевантные психические состояния. СПб, 2002.
6. Назаренко Г.В. Невменяемость в уголовном праве. Орел, 1993.
7. Михеев Р.И. Невменяемость. Социально-правовой очерк. Владивосток, 1992.
8. Павлов В.Г. Субъект преступления. СПб, 2001.
9. Трахтеров В.С. Вменяемость и невменяемость в уголовном праве (исторический очерк). Харьков, 1989.

**Թեմա 9.**
**Հանցագործության սուբյեկտիվ կողմը**
(8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 8 ժամ գործնական)

1. Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը, քրեաիրավական նշանակությունը: 2. Մեղքը որպես հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ. մեղքի վերաբերյալ առկա տեսությունները, մեղքի հասկացությունը, մեղքի ձևերը և դրանց քրեաիրավական նշանակությունը: 3. Դիտավորությունը որպես մեղքի ձև. տեսակները, գիտակցական և կամային հատկանիշները, դիտավորության տեսակի խնդիրը ձևական հանցակազմերում, կոնկրետացված և չկոնկրետացված դիտավորությունների դեպքում արարքի որակման խնդիրները: 4. Անզգուշությունը որպես մեղքի ձև. տեսակները, գիտակցական և կամային հատկանիշները, անփութության դրական և բացասական, օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները: 5. Առանց մեղքի վնաս պատճառելը: 6. Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններ. հասկացությունը, տեսակները, քրեաիրավական նշանակությունը: 7. Հանցագործության շարժառիթը, նպատակը, հույզերը, աֆեկտի քրեաիրավական նշանակությունը: 8. Իրավաբանական սխալ. հասկացությունը, տեսակները, արարքի որակումը իրավաբանական սխալի դեպքում: 9. Փաստական

սխալ. հասկացությունը, տեսակները, արարքի որակումը հանցագործության օբյեկտի, առարկայի, միջոցների, պատճառական կապի, ծանրացնող հանգամանքների մեջ սխալի դեպքում:

**Հարցեր 1-9** – Անցկացվում է դասախոսություն:

**Հարցեր 3-6 և 8-9** – Անցկացվում է գործնական պարապմունք՝ խնդիրների լուծմամբ (ուսանողները բաժանվում են երկու խմբի՝ դատական պրակտիկայից վերցված օրինակների շուրջ քննարկում ծավալելու նպատակով):

**Թեմային վերաբերող պարտադիր գրականություն**


1. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին (վերջին փոփոխություններով և լրացումներով)):
2. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Երևան, 2012թ.:
3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1, Երևան, 2009, Հատոր 2, 2010թ. Հատոր 3, 2012թ.:
4. Խնդրագիրք Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք դասընթացի (Ընդհանուր մաս), Երևան, 2012թ.:


**Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն**


1. Рарог А.И. Проблемы субъективной стороны преступления. М., 2003.
2. Музюкин А.П. Мотив преступления и его уголовно-правовое значение: монография., М., 2012.
3. Векленко С.В. Понятие, сущность, содержание и формы вины в уголовном праве. М., 2002.
4. Волков Б.С. Мотив и квалификация преступления. Казань, 1968.
5. Дагель П.С. Неосторожность. Уголовно-правовые и криминологические проблемы. М., 1977.
6. Злобин Г.А., Никифоров Б.С. Умысел и его формы. М., 1972.
7. Лунеев В.В. Субъективное вменение. М., 2000.
8. Квашис В.Е. Преступная неосторожность. Социально-правовые и криминологические проблемы. Владивосток, 1986.
9. Назаренко Г.В. Вина в уголовном праве. Орел, 1996.
10. Назаров В.В., Якушин В.А. Ошибка в уголовном праве. Ульяновск, 1997.
11. Нерсесян В.А. Неосторожные преступления: Проблемы и решения. Красноярск, 1999.
12. Рарог А.И. Проблемы субъективной стороны преступления. М., 1991.
13. Рарог А.И. Вина в советском уголовном праве. Саратов, 1987.

14. Якушин В.А., Каштанов К.Ф. Вина как основа субъективного вменения. Ульяновск, 1997.
15. Якушин В.А. Ошибка и ее уголовно-правовое значение. Казань, 1988.

## Թեմա 10.
## Քրեական պատասխանատվության հասկացությունը: Քրեական պատասխանատվության հիմքը

(2 դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Քրեական պատասխանատվության հասկացությունը, քրեական պատասխանատվությունը որպես բարդ համակարգային երևույթ: 2. Քրեական պատասխանատվության իրագործման ձևերը: Քրեական պատասխանատվության տարբերությունները պատասխանատվության այլ տեսակներից: 3. Քրեական պատասխանատվության հիմքի վերաբերյալ եղած տեսակետները. հանցակազմը որպես քրեական պատասխանատվության հիմք, հանցագործությունը որպես քրեական պատասխանատվության հիմք, մեղքը որպես քրեական պատասխանատվության հիմք, մեղադրական դատավճիռը որպես քրեական պատասխանատվության հիմք, քրեական պատասխանատվության սոցիալական և իրավաբանական հիմքերի առանձնացումը:

**Հարցեր 1-2** – Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը:

**Հարց 3** – Անցկացվում է դասախոսություն:

**Հարց 1-3** – Անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում քննարկվում են խնդրահարույց հարցերը:

### Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին (վերջին փոփոխություններով և լրացումներով)):
2. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Երևան, 2012թ.:
3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1, Երևան, 2009, Հատոր 2, 2010թ. Հատոր 3, 2012թ.:

### Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Астемиров З.А. Проблемы теории уголовной ответственности и наказания. Махачкала, 1994.

2. Лесниченко И.П. Понятие и основание уголовной ответственности. Ставрополь, 2005.
3. Карпушин К.Н. Уголовная ответственность и состав преступления. М., 2002.

## Քրեական իրավունք –1 դասընթացի համար առաջարկվող ընդհանուր գրականություն

### Պարտադիր գրականություն

1. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2003թ. ապրիլի 18-ին (վերջին փոփոխություններով և լրացումներով)):
2. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար, Երևան, 2012:
3. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Հատոր 1, Երևան, 2009, Հատոր 2, 2010թ. Հատոր 3, 2012թ.
4. Խնդրագիրք Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք դասընթացի (Ընդհանուր մաս), Երևան, 2012թ.:

### Լրացուցիչ գրականություն

1. Аветисян С.С. Специальный субъект преступления и уголовная ответственность. Ереван, 2003.
2. Астемиров З.А. Проблемы теории уголовной ответственности и наказания. Махачкала, 1994.
3. Базаров Р.А. Преступление. Состав преступления. Челябинск, 1997.
4. Беляев В.Г. Применение уголовного закона: учебное пособие. Волгоград, 1998.
5. Блум М.И. Действие уголовного закона в пространстве. Рига, 1974.
6. Бойков А.И., Волженкин Б.В. Уголовный закон: действие во времени и пространстве. Санкт-Петербург, 1993.
7. Винокуров В.Н. Объект преступления: теория, законодательство, практика., М., 2011.
8. Векленко С.В. Понятие, сущность, содержание и формы вины в уголовном праве. М., 2002.
9. Волков Б.С. Мотив и квалификация преступления. Казань, 1968.
10. Гонтарь И.Я. Преступление и состав преступления как явления и понятия в уголовном праве. Вопросы теории и правотворчества. Владивосток, 1997.
11. Дагель П.С. Неосторожность. Уголовно-правовые и криминологические проблемы. М., 1977.

12. Дьякин А.Л., Бытко Ю.И. Уголовная ответственность юридических лиц., Саратов, 2009.
13. Злобин Г.А., Никифоров Б.С. Умысел и его формы. М., 1972.
14. Игнатов А.Н., Костарева Т.А. Уголовная ответственность и состав преступления. М., 1996.
15. Казаченко И.Я., Сухарев Е.А., Гусев Е.А. Проблема уменьшенной вменяемости. Екатеринбург, 1993.
16. Карпушин К.Н. Уголовная ответственность и состав преступления. М., 2002.
17. Квашис В.Е. Преступная неосторожность. Социально-правовые и криминологические проблемы. Владивосток, 1986.
18. Ковалев М.И. Преступление и ответственность. Свердловск, 1987.
19. Ковалев М.И. Проблемы учения об объективной стороне состава преступления. Красноярск, 1991.
20. Ковалев М.И. Объективная сторона преступления. Красноярск, 1993.
21. Ковалев О.Г. Уголовное право. Общая часть, М., 2007.
22. Коржанский Н.И. Объект и предмет уголовно-правовой охраны. М., 1980.
23. Коробеев А.И. Уголовная наказуемость общественно опасных деяний. Хабаровск, 1986.
24. Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. М., 1972.
25. Куринов Б.А. Научные основы квалификации преступлений. М., 1984.
26. Курс уголовного права. Общая часть. Т. 1, Т. 2, М., 1999.
27. Лазарев А. И. Субъект преступления. М., 1981.
28. Лесниченко И.П. Понятие и основание уголовной ответственности. Ставрополь, 2005.
29. Лопашенко Н. А. Введение в уголовное право. Учебное пособие. М., 2009.
30. Лунеев В.В. Субъективное вменение. М., 2000.
31.
32. Малинин В.Б. Причинная связь в уголовном праве. СПб, 2000.
33. Мальцев В.В. Проблемы уголовно-правовой оценки общественно опасных последствий. Саратов, 1989.
34. Мальцев В.В. Принципы уголовного права. СПб, 2004.
35. Марцев А.И. Преступление: сущность и содержание. Омск, 1986.
36. Медведев А.М. Пределы действия УК РФ. М., 1998.
37. Метельский П.С. Состав преступления. Новосибирск, 2000.
38. Михеев Р.И. Невменяемость. Социально-правовой очерк. Владивосток, 1992.
39. Музюкин А.П. Мотив преступления и его уголовно-правовое значение: монография., М., 2012.

40. Назаренко Г.В. Вина в уголовном праве. Орел, 1996.
41. Назаренко Г.В. Невменяемость: уголовно-релевантные психические состояния. СПб, 2002.
42. Назаренко Г.В. Невменяемость в уголовном праве. Орел, 1993.
43. Назаров В.В., Якушин В.А. Ошибка в уголовном праве. Ульяновск, 1997.
44. Наумов А.В. Российское уголовное право. Общая часть. М., 1996.
45. Наумов В.А. Толкование норм права. М., 1998.Попов А.Н. Уголовный закон и его обратная сила. СПб, 1998.
46. Нерсесян В.А. Неосторожные преступления: Проблемы и решения. Красноярск, 1999.
47. Новоселев Г.П. Учение об объекте преступления. Методологические аспекты. М., 2001.
48. Павлов В.Г. Субъект преступления. СПб, 2001.
49. Печников Н.П. Категории преступлений и их уголовно-правовое значение: курс лекций. Тамбов, 2007.
50. Прохоров В.С. Преступление и ответственность. Л., 1984.
51. Разгильдяев Б.Т. Задачи уголовного права Российской Федерации и их реализация. Саратов, 1993.
52. Рарог А.И. Проблемы субъективной стороны преступления. М., 2003.
53. Рарог А.И. Проблемы субъективной стороны преступления. М., 1991.
54. Рарог А.И. Вина в советском уголовном праве. Саратов, 1987.
55. Сахаров В.И. Средства и орудия совершения преступлений и их уголовно-правовое значение. М., 1996.
56. Таций В.Я. Объект и предмет преступления в советском уголовном праве. Харьков, 1988.
57. Тер-Акопов А.А. Бездействие как форма преступного поведения. М., 1980.
58. Тер-Акопов А.А. Преступление и проблемы нефизической причинности в уголовном праве. М., 2003.
59. Трахтеров В.С. Вменяемость и невменяемость в уголовном праве (исторический очерк). Харьков, 1989.
60. Уголовное право. Общая часть. Изд. ИНФРА М — Норма. М., 1997.
61. Уголовное право. Общая часть. Лекция 1. Игнатов А.Н. Введение в изучение уголовного права. Уголовный закон. М., 1996.
62. Уголовное право. Общая часть: Учебник / Под ред. В.Н. Петрашева. М., 1999.
63. Филимонов В.Д. Принципы уголовного права. М., 2002.
64. Щепельков В.Ф. Уголовный закон: понятие, структура, пределы действия и толкование. СПб, 2002.
65. Якубов А.Е. Обратная сила уголовного закона. М., 2003

66. Якушин В.А., Каштанов К.Ф. Вина как основа субъективного вменения. Ульяновск, 1997.
67. Якушин В.А. Ошибка и ее уголовно-правовое значение. Казань, 1988.
68. Wayne R. LaFave. Criminal Law. Fifth edition. St.Paul, Minn.: West/Thomson, 2010.
69. Peter Wahlgren. Criminal Law. Stockholm, 2009.

Ուսանողները կարող են օգտվել նաև հետևյալ web-կայքերից
www.elibrary.ru
www.law.edu.ru
www.court.am
www.concourt.am
www.laws.am
www.datalex.am

Եվրոպական դատարանի որոշումների համար՝
www.hro.org
www.echr.ru
www.europeancourt.ru